

մունքներին: Ահա երկու շարժիչներս որով թե մեծապէս օգնում են դպրոցական գործին և թե իրենց գործը թեթեւացնում: Անդղիական դպրոցը փոքր զիւրքով նոյն երկրի պետական մարմնի կազմակերպութիւնն ունի նորա հասարակական շէնքն է:

Ուսուցչի և աշակերտի յարաբերութիւնները շատ սերտ են: բարեկամական և ոչ պաշտօնական: Ուսուցիչները շատ են հաւատում իրենց սանիկներին: մանաւանդ մեծերին: Վերջիններս՝ նոյն իսկ փոքրների կրթութեան գործում մասնակից են անում: Մեր ամենից լաւ օգնականները մեծ աշակերտներն են: աւում է Բեաւեան դպրանոցի տեսուչը՝ աւանց նոցա օգնութեան շատ գծուար կլինէր: նոյն իսկ անկարելի՝ մեր գործը կատարել: Ծրեց աշակերտները աւելի շատ կարող են օգնել դպրոցի կարգապահութեան և լաւ աղ-դեցութիւն ունենալ աշակերտների վերայ: քան վերահսկիչները: ուստի նրանց են վստահա-նում փոքր ընկերների հսկողութիւնը: Ամէն մի խումբ աշակերտ ունենում է իւր մոնի-տորը՝ դասարանում մինը կառավարում է մասնաւորաբար և զբքեր տալիս ոչ միայն աշակերտներին այլ և ուսուցչաց: երկրորդը՝ դասարանական աւարկաները: երրորդը խաղաղիքները: պարտիզպանական գործիքնե-րը ևլն ևլն: Փոքր աշակերտները պարտա-ւոր են լսել մոնիտորին: որը իրաւունք ունի նոյն իսկ պատժել: բայց եթէ ապացուցուի որ ինքն է յանցաւորը: խիստ պատժի կեն-թաղիւի: Այսպէս վստահութիւն և հեղի-նակութիւն երկու կրթիչ ցոյցեր են: ուսու-ցիչը վստահանում է կատարելապէս աշակեր-տին: իսկ վերջինն հնազանդում է ոչ միայն ուսուցչի այլ և իւր մեծ ընկերոջ հեղինակու-թեան: Իւրաքանչիւր աշակերտ վայելում է ընդարձակ ազատութիւն: ալն մէկի անկա-խութիւնը յարգուում է: բայց և աշաւուրջ հսկում են: որ անհատի շահը չ'ընդհարուի հասարակաց շահի հետ: Եւ այս մի խումբ մա-նուկ քաղաքացիները որոնք յարգում են իրենց անձնաւորութիւնը և ընկերի ազատութիւնը: որոնք ունին իրենց առաջ պայտիսի կառավա-րիչներ (մոնիտորներ) հասկանում են որ իւրաքանչիւրի անհատական ցանկութեանց մէջ

պէտք է լինի զօրեղ հաստատութիւն և միու-թիւն: որ նոցա կամքը պէտք է միանայ և պահպանուի ընդհանուրի ջանքով և հնա-զանդի մի ընդհանուր օրէնքի (Լե'կլերկ):

Այժմ տեսնեք ինչպէս և ինչ ճրագրով յառաջ են վարում այստեղ ուսուցման գործը:

(Եւրո-նակէլէ)

Ս. Բ.



ՆԱԽԱԳԻԼԻԿԵԱՆ—ԱԸԹԵԱՆ ՆՈՐ ԱՐՉԱՆԱ
ԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ԿԵՍՈՒՐԱՆ.

Անցեալ տարի ի ս. Էջմիածին գտնուած միջոցիս խոստացել էի ուղարկել Արարատի համար, հնութեան և կամ Հէթէթեան արձա-նագրութեան վերաբերեալ այն ալն գիւտե-րն: որք եթէ ի նորոյ գտնուին ի Կեսարիա և ի շրջակայս նորին: Ահա աւելի այս անգամ՝ կը կատարեմ իմ խոստումս: ուղարկելով Նա-խալէլէեան—Հաթէան նորագիւտ արձանագրու-թիւն մի՝ ի տարագրութիւն և ի հրատարա-կութիւն Արարատ ամսագրի մէջ:

Ասկից առաջ, Վիեննայի Միթիթարեանց միարանութեան կողմի հրատարակուող, Հան-դէս Ամսօրեայ ուսումնաթերթի, 1896 յու-նիս ամսաթուսն մէջ (Էջ 161), երբ Ագրակի Ծախակիլիկեան — Հաթեան արձանագրու-թեան կրկին մէկ օրինակը կը ներկայացնէի: առիթ ունեցայ այնակ ըսելու թէ՝ Կեսա-րիոյ հարաւային կողմը Էրձիսս (=Արգէոս) անուն հռչակաւոր լեռն ստորոտը գտնուած, առաւել կամ նուազ ընդարձակ տափարակ տեղերու: բլրակներու: սարերու և ձորերու վրայ եղած բազմաթիւ այգիներու կարգին մէջ Նէյէթ¹ մը կը գտնուի, որուն Կեսարիոյ ամէն ազդի ժողովրդեան բերնին մէջ, անյիշատակ ժամանակներէ, ի վեր, «Հէթէթէ» Նէյէթ կրա-

1. Կեսարիոյ, առ հասարակ ամեն ազգի ժողովրդեան մէջ Նիշէթ կրտուի: ինչպէս ծանօթացած ենք աղիւն, 50—100 և կամ ալ անիյն այգիներու տեղ-ւոյն, որք սահմանի մը մէջ են: և իւրաքանչիւր մեծ ու փոքր այգին այս ու այն անհատին սեփական է:


ուի: Ասկեց զստ աւելցուցած էի թէ, բուն իսկ քաղաքին պսիւնքն՝ Կեսարիոյ մէջ, օտարազգի թուրք ընտանիք մըն ալ կայ, որոնց՝ նոյնպէս անյիշատակ ժամանակներէ, ի վեր, Հէթէններու ընտանիք կըսուի, և բացատրած էի նաեւ թէ, Կեսարիոյ ժողովրդեան Հէթէն ըսելով ինչ տեսակ մարդիկ կը հասկնայ. ինչպէս, Հէթէն ըսելով կը հասկնան այն կարգի անձներն, որոնք իրենց օրերը պարապ և զինեաներու մէջ կանցնեն, ստորին և անազնիւ կերպիւ իրը թէ, քաջութիւններ կանեն, և կամ ստորին կերպիւ այս ու այն մարդը չարչարելու վատահամբաւելը իրենց համար քաջութիւն կը համարեն:

Այն ժամանակի Գերմանացի Փրէֆէստօր Մ. Եէնսէն, որ մասնագէտ է Մասիակիլիկան — Հռոմեան արձանագրութիւններու ընթերցման, մեր տուած յիշեալ տեղեկութիւններն ամբողջութեամբ որ եւ է, կարեւորութենէ զուրկ համարած էր, ինչպէս մասնաւոր զրութեամբ մը տեղեկացուցած էր մեզ Հանգէս Ամսօրեայի նախկին խմբագրապետ Հ. Գ. Գալեմբէրեան: Բայց ինչու և ինչպիսի զիտողութիւններով կարեւորութենէ զուրկ համարուեցան մեր այդ տեղեկութիւններն Ազնիւ Փրէֆէստօրի կողմէն կը մնայ մեզ անծանօթ:

Եւ ահաւասիկ ձիշտ այդ կողմերը, այն է,

Հէթէններու — Նէյնէն և անոր շատ մօտիկը, պանշիկի դիրքով շինուած, օղաւէտ Ասորէի անուն թրքարնակ գիւղի և Նէյնէն միջեւ եղած ձորի մը մէջ, այս անգամ գտնուեցաւ հասարակարծր և սեղրակ քար մը, որ քարին մէկ երեսը փորագրուած է Հռոմեան արձանագրութիւն մը, զիւր մը՝ որ կը կարծենք թէ հնագիտական աշխարհը բաւական պիտի զբաղեցնէ, և ուշադրութիւն պիտի դարձնէ նաեւ Կեսարիոյ և իր շրջակայներու վրայ, և կը կարծենք նաեւ թէ, մեր տուած տեղեկութեանց վրայ աւաւել հետաքրքրութիւն պիտի ունենայ:

Արձանագրութեան քարը, այժմեայ վիճակի մէջ, երկայնութեամբ և լայնութեամբ, զրեթէ 80 հաւրիւրամետր տարածութիւն մը ունի, բայց յայտնի կերեւի թէ, չորս կողմերէն փոքր ինչ մասեր կտրած են, և վրայի փորագրուած արձանագրութիւնն ալ, ժամանակի շատ երկար հոլովմամբ, քիչ շատ եղծուած է. այսու ամենայնիւ որչափ կարելի էր, մեծ ուշադրութիւն տուինք և ջանք չի խնայեցինք ճշտութեամբ ընդօրինակելու համար, և որ այժմ կը ներկայացնենք այստեղ ի գիտութիւն հնագիտական աշխարհին, և մասնաւորապէս ի քննութիւն և յընթերցումն Փրէֆէստօր Եէնսէնի*:



34

* Ման. Արձանագրութեան տը կողմից ետեւորդ տղի զիմաց դարձեալ մի քանի նշանագրեր են եղած Գերացաշէ յօդուածագրի ասելով, բայց եղծուած են: Գերացաշէ յօդուածագրի ուղարկած ընդօրինակութիւնը փոքրացած է մեր պատկերի մէջ մօտ երկու և կէս անգամ, ուրեմն ընագրից փոքր է հինգ անգամ:

Ինչպէս կը տեսնուի, արձանագրութեան միջև եղած երկու հորիզոնական գիծերը բնականին են, բայց շուրջը եղած գիծը մենք մեր կողմէն աւելցուցած ենք, քարին արձանագրութիւն գտնուած երեսի ձեւն ու կտրած մասերը ճշտագէտ ցուցնելու համար: Ընդօրինակութիւնը փոքրցուցած ենք դրեթէ կիսով չափ, թէ քարին տարածութիւնը և թէ բնականապէս նշանագրերն: Նշանագրոց երրորդ կարգին մէջ թուշունի մը ձեւը կայ, որուն ճշտութեանը համար բոլորովին չենք կրնար երաշխաստել, որովհետեւ շատ եղծուած էր այդ նշանագրերն և այնպէս իմն կերեւեր թէ՛ կարծես թուշուն մըն է:

Քարը այս օրերս տեղական կառավարութեան միջոցաւ, կը դրիւի Կ. Պոլսոյ Կայսերական թանգարանին, որուն տնօրէնութեան կողմէն հետազոտով պահանջուած էր, կարևոր հնութիւն մը ըլլալուն պատճառաւ, ինչպէս նաև հրատարակած էին այս վերջին օրերս Կ. Պոլսոյ Ազգային և օտար բոլոր օրաթերքներն:

Հանգէս Ամօրեայ ուսումնաթերթին մէջ հրատարակուած և վերև յիշուած Ազգային արձանագրութեան մի ուրիշ և աւելի ճիշտ ընդօրինակութիւնն ունեցայ այս օրերս, զոր յարմար առթիւ այն ալ պիտի խաւրեմ Արժ. Խմբագրութեանդ, կրկին հրատարակութեան համար Արարատի մէջ:

ՏՐՈՒՏ ԵՊԻՍԿՈՍՈՍ ՊԱՒԵԱՆ,

Կ Ե Ս Ա Ր Ի Ո Յ

1900 Մայիս 15/28
Կ Ե Ս Ա Ր Ի Ա .



ԴԱՆԻԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻԲ.

Ով որ Դանիան ճանաչում է իւր վաղեմի աշխարհագրական դատերեց, բնական է, որ նա այդ փոքր աշխարհի մայրաքաղաքն ևս շատ նշանաւոր բան չի երեւակայում: Բայց խնկայէս Կիոպկենտներ * օտարն վերայ ազդու ապաւորու-

* Այսպէս են տնտեսում իրանի դանիայի մեր Կոպկենտներն կոչած խաղաքը:

թիւն է դործում: Այդ քաղաքը ոչ միայն դեղեցիկ է բնական դիրքով, ոչ միայն աւելի ևս դեղեցիկացել է մարդկային հանճարի արուեստով, այլև եւրոպական մեծ խաղախ բոլոր յատկութիւններով բարեկարգուել է և միշտ աւելի յարմարութիւններ է ստանում: Մեծ ճոխութիւն, փարթամութիւն չունի, բայց ճաշակի քաղաքակրթութեան, յառաջագիմութեան կնիքը դրոշմած է վերան, Արդեօք իրա ջրանցքները և ծովի ափը յիշատակենք, որ ձիւնափայլ կարապետներ երամներով և կայմերի շաբօնն անառաով կենդանութիւն են ստանում. արդեօք ծովի և ցամաքի հրաշալիք հրաշալիքի վերայ աւելացնելու մըցութիւնը նկարագրենք. արդեօք քաղաքի վարչութիւնը դովենք, որ ոչ մի քլունգ չի բանեցնել տուել, առանց երեւելի արուեստագէտների կրթմանկարգի ձեռնի, որպէս զի ոչ մի բլրակ, ոչ մի հրուանդան, եզրի ոչ մի կտոր դուր չկուշի և ամէնքը մի սքանչելի փունջ և կատարեալ յօրինուածութիւն ձևացնեն: Կամ միթէ կարելի է լուծեամբ դանց առնել քաղաքի շինութեանց բարեկարգմութիւնը, փողոցների հայելաձև սալաշատակը, առատ լուսաւորութիւնը, արթուն ոտականութիւնը, առողջապահ շուկաները, ամէն կարգի հաղորդակցութիւնը, հերոսների և վաստակաւորների յաւերժացումն արձաններով և յիշատակարաններով և էն: Տիւկո Բրասիլ (Տիւկո դը Բրասիլ), Էրշտէդի, Աննեքսի (Անդէքսի), Բրանդէսի, Հիւֆգլինգի, Ֆլինսէնի Դանիան՝ իրաւամբ պարծենում է իւր փառաւոր Կիոպկենտներով...

Յայտնի է, թէ օտարականը ինչ տանջանքներ է կրում մի քաղաքի մէջ, ուր տեղացիների լեզուն չի հասկանում և ոչ մի ծանօթ մարդ չունի: Դանիացիք բաւական չափով թեթեւացրել են օտարի անձարութիւնը: Ամէն կիոսի (քօջի) վերայ նկարագրած է քաղաքի մեծ յատակագիծը, փողոցներն էլ խիստ նշմարելի գրով անուններ են կրում:—Մի ընկերութիւն կայ, որ պատրաստ է ձրի խոսքուրդ և առաջնորդութիւն տալու, որ և հրատարակել է եւրոպական լեզուներով (ռուս., գերմ., ֆրանս., անգլիերէն) ուղեցոյցներ ամէն տեսակ մանր մօճեր տեղեկութիւններով:—Մեծ և փոքր խանութներում ամենայն ապրանքի գինը վերան տպագիր նշանակած է: միայն թէ հիտենաք, թէ դրամի խոշորը կոչվում է կրոնկ (մօտ 54 կոպ.), իսկ մանրը՝ կոռկ (1/2 կոպ.):—Եթէ ուզենաք կառքով պտտել, վերան կը դանէք մի ժամացոյց, որ յատուկ մեքենայութեամբ ցոյց կու տայ, թէ երբ էք կառք նստել, որքան ժամանակ էք պտտել և թէ որքան պէտք է վճարէք:—Կամ եթէ հիւրանոց մտնէք, պատին շարած կը դանէք առճամանը, որոնք ինքնին մա-